

Թիւ 25519

Դեկտեմբեր 16, 1977

Մեծայարգ
Տիար Էերովբէ Գալուստեան
Նիւ Եորք.

Ձարգելի Տիար Գալուստեան,

Ձեզի հետ մեր հանդիպումը ուրախութիւն պատճառեց մեզի եւ առիթ ընծայեց որ աւելի մօտէն ծանչնանք ձեզ եւ տեղեկանանք ձեր կեանքի անցեալի տառապանքներուն ու զրկանքներուն, ինչպէս նաեւ ձեր անյուսահատ ձեռնհասութեամբ շահած յաջողութիւններուն մասին:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ձեր ըրած նուէրին եւ ձեր օգտակար թելադրութիւններուն ու ծրագիրներուն համար՝ Ս. Վարդան Մայր Տաճարի տարեցներու խումբի յայտագիրներու յաջողութեան եւ արդիւնաւորման ի նպաստ: Կը մաղթենք որ ձեր խանդավառութիւնը օրինակ ծառայէ բոլորին՝ որպէս զի անոնք եւս նոյն հետաքրքրութիւնը ցոյց տան մեր համայնքային կեանքին նկատմամբ:

Կը շնորհաւորենք Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, ձեր ազնիւ տիկնոջ եւ ձեր պարագաներուն մաղթելով առաւել առողջ ու երկար տարիներ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ